Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորական ուղերձը ուսուցչի օրվա առթիվ

Սիրելի՛ ուսուցիչներ,

այս տոնը լավագույն առիթ է՝ ձեր կատարած նվիրական աշխատանքն ըստ արժանվույն գնահատելու, մեր երախտագիտությունը հայտնելու և քաջալերելու համար: Ձեզ է պատգամված հազարամյակների խորքից եկող Հայոց դպրության լուսավոր ջահը միշտ վառ պահելու սուրբ գործը, ձեզ է վերապահված սերունդներին հայեցի ու համամարդկային արժեքների հիման վրա կրթելու և դաստիարակելու առաքելությունը: Եվ դուք ձեր ամենօրյա նվիրական աշխատանքով կերտում, ամրացնում ու զորացնում եք մեր հայրենիքը իր հոգևոր, մտավոր, ստեղծարար կյանքի մեջ, ավանդում հայրենասիրության ու մարդասիրության անմոռանալի դասեր, որոնք չափազանց անհրաժեշտ են յուրաքանչյուր մարդու կայացման համար: Ու պատահական չէ, որ ամեն ակնթարթ մենք հիշում ենք մեր ուսուցիչներին, նրանց տված դաստիարակությունն ու գիտելիքները, նրանց բարի ժպիտներն ու խորհուրդները, թափած ջանքերը: Լինի խաղաղ, թե պատերազմական օրերում, մեր ուսուցիչները միշտ եղել ու մնում են ազգապահպանության ու հայրենափրկության առաջնագծում՝ կռելով այն սերունդը, որը լավ գիտի մարտահրավերները հաղթահարելու, ավելի բարօր ու խաղաղ կյանք կրտելու, համահայկական իղձերն ու երազանքներն իրականություն դարձնելու ճանապարհները: Ջերմորեն շնորհավուրում եմ մեր համայնքի բոլոր մանկավարժներին, մաղթում քաջառողջություն, ամենայն բարիք, նորանոր հաջողություններ անձնական կյանքում և մասնագիտական աշխատանքում:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար

Հովհաննես Հովեյան